Գարա-Քիլիսէն այս օր թէև առանձին գաւառակ է, ունի իւր գայմագամը և Ալաշկերտի չափ և աւելի ևս բնակիչ ունի, սակայն Մուրատ և Շեռեան գետոց հիւսիսն նաև Ջրաբաշխ (Սուկաւետէն մինչև Սինէկ) լերանց շղթային հարաւային ամբողջ հովիտն այս երկու վիճակներն միանգամէն բռնած լինելով՝ բնական բաժանումով ի նախնիս Վաղարշակերտ ասուած լինին։

Գարա-Քիլիսէի այժմեան կառավարչանիստ վայրն նախ գիւղ մի էր Պարսկաստանի կարաւանի ճանապարհի վերան․ 1860—70 թուականներուն իբրև եկեղեցւոյ կալուած 10—15-ի չափ կրպակ շինուեցաւ ձեռնտուութեամբ տեղս հաստատուած կարգ մի Բաղիշեցի առևտրականներուն և գործակցութեամբ Բագրևանդայ առաջնորդ այժմեան Յովհաննէս եպիսկոպոսի։

Նոյն ժամանակ Գարա-Քիլիսէն ունէր 200 տուն զուտ հայ բնակիչ։ Վերջին ռուս-թուրքական պատերազմին ժողովրդեան մեծ մասը գաղթեց․ մնացած 80 տունը տակաւ առ տակաւ Բաղեշէ․ Պուլանխէ և Մանազկերտէ ելն․ եկւորներով բնակչաց թիւը աճեցաւ, մինչև 250 տուն հասաւ․ 1885 թուականէն թուրքք սկսան այստեղ հաստատուիլ, առևտրական կրպակներ և արհեստանոցներ շինուեցան․ 90—91 թուին ևս զօրանոց շինուեցաւ․ որով քուրդ և թուրք պաշտօնեայք բազմացան․ մօտ 100 ընտանիք բնակութիւն հաստատեցին, կանոնաւոր շինութիւններ շինեցին, որով այս օր քաղաք դառնալու վերայ է։

Զինուորական փաշան ուզեց Գարա-Քիլիսէի (սեաւ եկեղեցի) անունը փոխել Ագ-շէհիր (Սպիտակ քաղաք) կոչել, սակայն ցարդ չէ յաջողած։

Դիրքը հիանալի է․ ամեն կողմ տեսարանը բաց է․